



Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն. մեդիայի հզորացման Նոր փուլ

Իրականացման 02.03.2026 - 31.07.2028
Ժամանակահատված:

ԱԼԳ երկրներ:
Armenia

ԵՄ ներդրում: € 970 000

Ընդհանուր € 1 100 737
բյուջե:

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Media Initiatives Center, Yerevan Press Club, Media Diversity Institute, Committee to Protect Freedom of Expression



Նախագծի

վարչապետություն:

Ծրագիրը զարգացնում է նույն կոնսորցիումի կողմից 2024թ-ից իրականացվող «Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնության» արդյունքները և շարունակում է հզորացնել հայաստանյան լրատվամիջոցներին՝ դառնալու անկախ և վստահելի դերակատարներ: Աջակցությունը ներառում է դասընթացներ, խորհրդատվություն և ֆինանսավորում՝ հզորացնելու որակյալ և ազդեցիկ մեդիա բովանդակություն ստեղծելու նրանց կարողությունը: Մեդիա բովանդակության սպառման մասին հանրային հարցումը կբացահայտի լսարանի կարիքներն ու նախապատվությունները:

Ծրագիրը նպաստում է անկախ լրատվամիջոցներին առնչվող իրավական դաշտի բարելավմանը՝ քաղաքականության մշակման և բարեփոխումների միջոցով: Աշխատանք է տարվում էթիկական լրագրության խթանման և լսարանի՝ լրատվամիջոցների հանդեպ վստահության մեծացման ուղղությամբ՝ ինքնակարգավորման արդյունավետ մեխանիզմներ ներդնելու և լրատվամիջոցների թափանցիկությունը ու հաշվետվողականությունը խթանելու միջոցով:

Ծրագիրը պաշտպանում է լրագրողների և լրատվամիջոցների իրավունքները ինչպես առօրյա գործունեության, այնպես էլ իրավական գործընթացների համատեքստում: Խմբագրությունների համար անցկացվում են անվտանգության դասընթացներ՝ ապահովելու լրագրողների պաշտպանվածությունը թվային, հոգեբանական և ֆիզիկական սպառնալիքներից: Ծրագիրը նպաստում է նաև մեդիագրագիտության տարածմանը՝ հասարակության տարբեր խմբերին օգնելով ավելի լավ կողմնորոշվել խրթին և բևեռացված տեղեկատվական

Ակնկալվող արդյունքներ:

1. Մեդիա կազմակերպությունները կարող են գործել որպես պրոֆեսիոնալ, անկախ և կայուն բիզնես կառույցներ:
2. Մեդիա կազմակերպությունները և դերակատարները ստեղծում են ընթերցողի համար առավել ուշագրավ, վերլուծական, պատասխանատու և վստահելի բովանդակություն:
3. Քաղաքացիական հասարակությունը, լրատվամիջոցները և պետական կառույցները համատեղ մասնակցում են մեդիա դաշտի բարեփոխումներին: